Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

198

Հաճիւի դատաստանը

8
Շ-28

Ս. Պետերբուրգ
1890

8-3
Շ-28

ՃԱՄԻԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.
Ի. Ն. ՍԿՕՐՕԽՕԴՕՎԻ ՏՊԱՐԱՆ
1890.

2011
2003

8-3 28 29-
ՀԱՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922

ՇԱՄԻԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Չեչնայի բոլոր աուլների գլխաւորները հաւաքուել են մի տեղ: Բոլորի ճակատները կընճռոտուած են, երեւում է՝ տխուր են ու մտածում են: Ի՞նչ է արդեօք տխրութեան պատճառը:—

Ռուսները շրջապատել են նրանց ամէն կողմից, կապել են նրանց բոլոր ճանապարհներն ու խոչընդոտ անտառները կտրատելով՝ կամաց-կամաց առաջ են գալիս...

Մոռացել է նրանց Շամիլը, մոռացել է նրանց Դաղստանի առիւծը, էլ չի լսւում նրա հզօր ձայնը... Ի՞նչ պէտք է անեն նրանք հիմա...

Ու ահա նրանց գլխաւորները հաւաքուել են մտածելու դրա մասին:

Չեչէնը չի վախենում մահուանից, եթէ այդ մահը նրա որդուն ազատութիւն կը բերէ, բայց ռուսները շատ են, զօրեղ, հարուստ......

Ոչինչ չէ մնում, կամ պէտք է հնազանդուել

ռուսներին, կամ պատերազմել յաղթելու յուսով, ու վճռում են չէչէնները, պատգամաւորներ ուղարկել Շամիլին առաջարկելու, որ նա կամ օգնական զօրք ուղարկէ, որի օգնութիւնով կարողանան չէչէնները հալածել ռուսներին, կամ թոյլ տայ հնազանդուելու գեաւուրներին... Բայց ո՞վ կարող է այս առաջարկութիւնը տանել Շամիլին, ո՞վ կարող է գլուխը զոհել կատաղի իմամի վրէժխնդրութիւնին: Չը կան համարձակները, պէտք է վիճակ գցել: Վիճակն ընկնում է չորս մարդու:

Գոռոզ է չէչէնը. ամենամեծ վտանգի առաջ անգամ նա չի երևեցնի վախի զգացմունքը, բայց երբ նրա վրա են դնում իրանց բոլոր յոյսը նրա ընկերները, այն ժամանակ նրան չի վախեցնի ջէհէննէմի կրակն անգամ: Այս էր պատճառը, որ պատգամաւորներն առանց մինչև անգամ տրտնջալու՝ խոստացան հայրենակիցներին կատարել իրանց վրա առած յանձնարարութիւնը, այսինքն՝ կամ օգնական զօրք բերել Շամիլից կամ թոյլտուութիւն հնազանդուելու թշնամիներին...

Հետևեալ առաւօտ առան պատգամաւորները ճանապարհի պաշարը, երեք հարիւր թուման ոսկի, միքանի ընծաներ ու ճանապարհ ընկան դէպի Դարգօ աուլը, ուր բնակւում էր Շամիլը: Նրանք ընթանում էին լուռ՝ առանց մի խօսք արտասանելու. նրանց սրտին ծանրացել էր այն խայտառակ պարտականութիւնը, որ յանձն էին առել կատարելու. նրանք մինչև անգամ չէին նայում միմեանց երեսին, կարծես ամաչում էին իրարից:

Նրանց առաջ ձգւում էին Կովկասի ձիւնապատ սարերը, որոնց լանջերում տեղ-տեղ սևին էին տալիս լեռնականների աուլները: Խաղաղ էր բնութիւնը. լսւում էր միայն նրանց ձիաների տրոփիւնն ու հեռու ջրվէժի խուլ գոգոչիւնը...

Արևն արդէն ցածանում էր հորիզոնից, բայց մեր ճամբորդները լուռ՝ անընդհատ ընթանում էին: Նրանց փրփրոտած ձիաներն երբեմն մագլցում էին ժայռերի վրա նեղ շաւիղներով, երբեմն իջնում խոր խորխորատները: Նրանք բարձրացան մի բլուր ու բլրի գլխից

երևեց Դարզо աուլը։ Նրանք յանկարծ ցընցուեցան, կարծես առաջներին մահ տեսան ու սիրթնած՝ սկսեցին իրար նայել, կարծես իրարից օգնութիւն խնդրելու։ Վերջապէս նրանցից մէկը՝ Ծերունի Թէփին ասաց միւսներին.

— Եղբայրնե՛ր, մենք գնում ենք կուրէ-կուր, բայց կրակը մեր առաջն է։ Կեղտոտ է մեր առաջարկութիւնը, արգարադատ է մեր իմամը։ Դուք գիտէք, որ ո՛չ միայն չէչէնները, այլ մինչև անգամ նրա ամենամօտ ղ-ղիդներն առանց պատժի չեն կարող դեռևս նրանց հնազանդուելու մասին խօսք բաց անել։ Օ՜, իմամը մեր լեզուն կը կտրի, մեր բերանը կը կարի այդ անարգ լուրը տանելու համար, քենջալն իր ձեռքով մեր կուրծքը կբերի, որ մեզ նման վախկոտներն էլ չը ճնան երկրի վրա։ Իսկ դուք գիտէք, որ մեր մահով մեր ազգին օգուտ չի դայ, այլ կորբանան միայն մեր ընտանիքները... Ես մի լաւ բան եմ մտածել...

— Ասա՛ ասա, իմաստուն Թէփի, ասացին միւսները, դէ՛, մենք լսում ենք։

Ու Նրանք իջան բլրից, որի ստորոտը վերջանում էր մի խոր ձորով։ Ձորի միջով անցնում էր մի առու, որի հետ միանում էր ժայռից դուրս ժայթքող մի աղբիւր։ Նրանք իջան այդ աղբիւրի մօտ փոքր ինչ հանգստանալու ու ճաշելու։

— Լսեցէ՛ք, շարունակեց Թէփին. դուք ամէնքդ էլ լսած կը լինէք իմամի մօր մասին։ Հ՚ամիլը, որ ոչոքի խորհուրդ չի ընդունում, այնքան սաստիկ սիրում է մօրը, որ նրա ամէն մի փոքրիկ ցանկութիւնը կատարում է այնպէս, ինչպէս ղ-ղանի սրբազան օրէնքները։ Դանի՞ մահուան դատապարտուածներ, քանի՞ անգութ վճիռներ փոխուել են նրա մօր միջնորդութիւնով։ Ամէն օր խնդրատուներ շրջապատում են խան-ի տունը ու, եթէ նա մի բան խոստանում է կատարել, յաջողութիւնը անկասկածելի է։ Դէ, ինչո՞ւ մենք էլ չը խնդրենք խանումին, որ մեզ համար միջնորդի։ Ես ունեմ մի հին բարեկամ Դարզոյում, այդ Դ՚ա-ֆ-ֆ-ոլլան է, որ շատ մօտիկ է խանումին։ Ես կը գնամ այսօր Դ՚ասիմ-մոլլայի մօտ ու կը խնդրեմ, որ մեզ ներկայացնի Հ՚ամիլի մօրը։ Մենք

կը պատմենք խանումին մեր անելանելի դրութիւնն ու կը խնդրենք, որ նա ինքն առաջարկի իր որդուն այն, ինչի համար որ եկել ենք...

Ընկերները շատ հաւանեցին Թէֆիի խօսքերն ու խնդրեցին, որ շուտով գնայ Ղասիմ մոլլայի մօտ։ Նրանք շուտով հեծան ձիաներն ու իրիկնադէմին հասան Դարդը, ուր և իրարից բաժանուեցին. Թէֆին գնաց իր մոլլայի մօտ, իսկ միւսներն իջևանեցին մի լեզգու տանը։

Ղասիմ-մոլլան փարեայի ֆ-նաֆայի վրա նըստած՝ ղէյլան էր ծխում, երբ մտաւ Թէֆին. նա շատ ուրախացաւ իր վաղեմի ընկերոջ տեսնելով ու հրամայեց, որ ընթրիք սարքեն։ Ռերին եփած ոչխարի միս, ֆ-խաբո-ֆ ապխտած դարան դմակ ու ֆ-օղլ (դարէջուլ) լեզգու սիրած կերակուրները։ Նրանք սկսեցին խօսել զանազան բաների վրա, յիշեցին իրանց երիտասարդութիւնը, միասին արած աւազակութիւնները։ Թէֆին խօսքը կամաց-կամաց իր գալու վրա բաց արաւ ու պատմեց ամէն բան։ Մոլլա-Ղասիմը, որ մինչև այդ ժամանակ ուրախ լսում էր իր ընկերոջ յօնքերը կիտեց ու բարկացած՝ երեսը շուռ տուաց։

— Ղոնաղ, գոռաց նա, ձեր չեչէնները արժանի չեն մեծ Մարգարէի պաշտողներ կոչուելու, եթէ նրանք յաւիտենական երջանկութիւնը վճռել են փոխելու ժամանակաւոր հանգստութիւնի հետ։ Լաալլահէ ելալահ, Մոհամմէդ ռեսուլ Ալլահ (չը կայ աստուած բացի Աստծուց, Մուհամմէդն է Աստծու մարգարէն)։ Սրանցից պիտի վախենայ միայն իսկական մուսուլմանը, սրանց վրա պիտի դնէ նա իր միակ յոյսը։ Դուք վախենում էք գեաուրի ձեռքից մահ ընդունել, բայց չը գիտէք, որ այդ ամենամօտ ճանապարհն է հուրիներով պճնուած ջննաթը մտնելու։ Ձեր առաջարկութիւնը, ինչի համար որ եկել էք, կանանց է միայն վայել, բայց դուք չէք կարող առանց պատժի ներկայանալ Շամիլին. դուք էլ չէք վերադառնալ ձեր վախկոտ չեչէնների մօտ ու ձեր ֆատառակ մահը միայն զզուանք կառաջացնէ մէն մի մուսուլմանի սրտում»։

Թէֆին փորձով գիտէր, որ բարեկամը

ամէն բանում պատրաստ է զիջանել, երբ կը տեսնէ իր սեփական օգուտը, ուստի կամաց-կամաց յետ արեց արխալուխի կոճակները, դուրս Թափեց Ղասիմ-մօլլայի առաջ պլպլան ոսկիներն ու ասաց քմծիծաղ. «իմ հայրենակիցները յարգում են իմաստուն Ղասիմի արժանաւորութիւններն ու երբև իրանց յարգանքի նշան՝ ղրկեցին քեզ այս փողերը փէշքէշ»։

Ոսկու փայլը մի րոպէում ցրւեց մռայլ ամպերը Ղասիմի ճակատից։ Նրա աչքերը փայլեցին հրճուանքով, ալևոր բեխերի տակից երևաց ժպիտն ու նա իբր Թէ ակամայից՝ ձախ ձեռքով ծածկեց ոսկիների կոյտը, իսկ աջով սեղմում էր Թէվֆիկի ձեռքը, որ պակաս ուրախ չէր՝ տեսնելով իր ոսկիների ազդեցութիւնը մուսուլման մօլլայի վրա։

— Ուրեմն մեզ ոչինչ չէ մնում յուսալ, շարունակեց խորամանկ չէչէնը փոքր ինչ լռութիւնից յետոյ։ Քո խօսքերից ես եզրակացրի, որ մեզ ոչինչ չէ մնում, եԹէ ոչ վերցնել մեր բերած 230 Թուման ոսկին, որ բերել ենք Շամիլի մօրն ընծայ ու յետ դառնալ մեր աշխարհը։

Այսպիսի մեծ գումարի անունը լսելով՝ Ղասիմ-մօլլան աւելի ուշադիր եղաւ։ «Մի՛ այդքան շտապիր, բարեկամ, ասաց նա, գուցէ ես սխալ հասկացայ քո պատասխանը, գուցէ կարելի է մի բան անել... Շամիլի մայրը մեծ ազդեցութիւն ունի իր որդու վրա, որը համարեա ամէն բանում լսում է մօրը։ Իմ խորհրդով համար և երկու հարիւր Թումանը, որ նրան փէշքէշ պիտի տաք, գուցէ կը ստիպի նրան ձեր օգտին գործել։ Ես ասումեմ երկու հարիւր Թուման, որովհետև այս կլոր գումարն աւելի յարմար է նրան առաջարկել, իսկ մնացած երեսունն ինձ կը տաք... Բայց դու ինձ պատմի՛ր աւելի մանրամասնաբար ձեր դրութիւնը։ Ես չեմ հաւատում, որ չէչէններն անտեղի կերպով կանեն այդ ատոր առաջարկութիւնը։

Թէվֆիկն կրկնեց իր պատմածը։ Ասաց, որ ռուսները Թէպէտ գեաւուրներ են, բայց լաւ մարդիկ են, որովհետև իրանց հպատակների հետ քաղցր են վարւում. պատմեց նոյնպէս իրանց անելանելի դրութիւնը, Թէ ինչպէս ռուսները կապել են բոլոր կրճերը, անտառները կտրել

ու կամաց-կամաց առաջանում են. պատմեց, որ ռուսները մինչև անգամ ամրոց են շինել չեչէնների ամէն մի շարժումի վրա հսկելու համար...

— Հասկանում եմ, հասկանում, կտրեց նրա խօսքը Ղասիմ-մոլլան կեղծ հառաչելով. չեչէնները նմանում են այն թռչունին, որ փակուած է վանդակում. նա թէպէտ ազատութիւն է փնտռում դէս ու դէն ընկնում, բայց միայն ցաւեցնում է իր թեւերը երկաթի վանդակներին խփելով ու վերջապէս՝ եթէ նրան լաւ են կերակրում, նա հաշտւում է իր գերութիւնի հետ ու մինչև անգամ սկսում է երգել... Դուք էլ այսպէս էք։ Ի՞մ կարծիքով նոյն իսկ Ալլահը չի դատապարտի ձեզ գեաուրներին հնազանդուելու համար, եթէ այդ հնազանդուելը ոչ թէ սեփական կամքով, այլ անհրաժեշտութիւնից է եղել... Այսպիսով՝ Ալլահին օգնութիւն կը կանչեմ ու էգուց և եթ կը սկսեմ ձեզ համար աշխատել։ Առաւօտեան կերթամ խանումին տեսնելու, կը պատմեմ ամէն բան, իսկ ճաշից յետոյ արդէն ձեզ կը ներկայացնեմ նրան։

Թէփին շատ շնորհակալ եղաւ իր բարեկամից. նա շուտով դուրս եկաւ ու գնաց իր ընկերների մօտ, որոնք առանց աչքերը խփելու՝ սպասում էին իրանց իմաստուն ընկերոջ բերած լուրին։

Ղասիմ-մոլլան մեծ յաջողութիւնով կատարեց իր վրա արած յանձնարարութիւնն ու հաւանաբար օրը ճաշից յետոյ չեչէններին ներկայացրեց Համիլի մօրը, որը խոստացաւ օգնել նրանց ու միջնորդել իր որդու առաջ։

Դաղստանի առիւծը՝ Համիլը նստած է իր հիւրասենեակում զուրանը ձեռքին։ Նրան շրջապատել են միւրիդները, որոնցից մի քանիսը ճանապարհի շորերով են. նրանք գնալու են նորից ապստամբեցնելու Մէհտուլցիներին ու Ավարներին։ Համիլը նրանց հրահանգներ է տալիս. միւրիդները լսում են նրան ակնածութիւնով։ Այդ ժամանակ դուռը բացւում է. ներս է մտնում մի կին ջադրով։ Համիլը ճանաչում է մօրն ու զարմացած՝ նայում է նրան։ Մօր գալը, որին իր քաղաքական գաղտնիք-

Ներին երբեք մասնակից չէր անում, շատ անժամանակ էր, բայց խանումը ուշադրություն չէ դարձնում այս բանի վրա։

— Որդի՛, քեզ հետ հարկաւոր գործ ունեմ ու դու իսկոյն ինձ պիտի լսես։

— Զի՞ կարելի, որ ուրիշ ժամանակի դցենք մեր խօսակցութիւնը, սիրելի՛ մայր, հարցրեց Համիլը խոնարհութիւնով։

— Ո՛չ մի բոպէ չի կարելի սպասել, ասաց մայրը յամառ կերպով, այն բանը, որի մասին ուզում եմ քեզ հետ խօսել, շատ է ինձ զբաղեցնում ու դու պէտք է յարգես մօրդ խնդիրը, նրան հանգստացնելու համար։

Համիլը դէմքը խոժոռեց։

— Լաւ, ասաց նա խիստ ձայնով, ես պատրաստ եմ իմ հարկաւոր գործս թողնել քեզ լսելու համար, յուսալով, որ քո պատմելու բանն արժէ այդպիսի մի մեծ զոհի։

Մուրիդները հեռացան։ Մայր ու որդի առանձնացած՝ խօսում էին մինչև լուսադէմը— արդեօք ի՞նչ էին խօսում, կամ ի՞նչ այնտեղ պատահեց՝ ոչոք չը գիտէ, միայն առաւօտը

տեսան լեզգիները, որ իրանց իմամը տխուր դէմքով մզկիթ է շտապում...

Համիլը փակուած է մզկիթում։ Ամբոր ժողովուրդը շրջապատել է մզկիթն ու աղօթում է. գոռող իմամը գնացել է Մարգարէի հետ խօսակցելու ու ժողովուրդը ծոմով ու աղօթքով պիտի անցկացնէ մինչև նրա դուրս գալը։

Արևն երկնքի գագաթն է հասել ու անողորմաբար այրում է շրջակայքը, բայց մուսուլմանները չեն շարժւում տեղից. նրանք ոչինչ չեն զգում։ Արևը ցածանում է հորիզոնից, սկսում է հեռու լեռներից երեկոյեան հովը փչել. անհետանում է արևնուծագում երեկոյեան ասողը. իսկ նրան հետևում է ծիր-կաթինը։ Սկսում է լեռնային ցուրտը, որ թափանցում է մինչև ոսկորները։ Գազանները, թռչունները մտել են իրանց բները, իսկ մուսուլմանները չեն շարժւում տեղից. նրանց լացը, վայոցը տարածւում է հեռու տեղ ու հեռուից նրանց ձայն է տալիս բորենին... եղեամն սկսում է իջնել...

Համիլը չէ երևում։ Նա ծոմով ու լացով

աղօթում է Ալլահին ու Մարգարէին, բայց ինչու համար՝ ոչ ոք չը գիտէ։

Լուսանում է. կրկին մթնանում, բայց մզկիթի դուռը կրկին փակ է։ Ձէ երևում Համիլը, չէ երևում դռռող խմամը...

Երրորդ օրը վերջապէս բացւում է մզկիթի դուռն ու դուրս է գալիս Համիլը սփրթնած, աչքերն արնակալած. դուրս է գալիս ու ձեռքով է անում միւրիդներից մէկին։ Միւրիդը մօտենում է, ապա հեռանում։ Համիլը մտնում է նորից մզկիթ, իսկ այնտեղից նրա կտուրը բարձրանում։

Ամբոխը ճեղքւում է։ Հեռացող միւրիդն արագ-արագ մօտենում է մզկիթին. նրան հետևում է Համիլի մայրը սպիտակ չաղրը ծածկած։ Նրանք բարձրանում են կտուրն ու նրանց յետևից էլ չորս միւրիդներ։ Համիլի մօրը կանգնեցնում են երես-երես իր որդու հետ։ Համիլը փոքր ինչ նայում է նրան, ապա ձեռքերը դէպի հարաւ տարածելով՝ ասում է թոյլ ձայնով.

«Մեծ մարգարէ Մուհամմէդ, սուրբ են ու

անփոփոխ քո հրամանները. ու թող կատարուի քո արդար դատաստանը ղուրանի բոլոր հետևողների առաջ»։ Ապա դառնալով դէպի ժողովուրդը՝ գոռաց բարձր ձայնով.

«Դարզոյի բնակիչներ, ես ձեզ պիտի պատմեմ մի սարսափելի լուր։ Ձիէները մոռացել են իրանց պարտքը, մոռացել են Ալլահին ու Մուհամմէդին տուած խոստումը։ Նրանք իրանց յանցաւոր սրտերում յղացրել են մի յանդուգն միտք՝ հնազանդուել գեաուրներին։ Նրանք չեն ամաչել մինչև անգամ ինձ մօտ մարդիկ ուղարկել, ստանալու համար իմ համաձայնութիւնը։ Դայց լաւ հասկանալով իրանց մտադրութիւնի ստորութիւնը՝ նրանց պատգամաւորները չեն յանդգնել ուղղակի ինձ երևալու ու միջնորդ են շինել իմ թշուառ մօրս, ու նա, իբրև մի թոյլ կին, համաձայնել է նրանց օգնելու։ Ես այնքան սիրում եմ մօրս ու նա այնքան յամառ էր իր պահանջումի մէջ, որ ես չը կարողացայ անձամբ մերժել նրա խնդիրն ու յանկացայ խորհուրդ հարցնել Մարգարէից մզկիթում։ Ու ես ստացայ այդ խորհուրդը, բայց

այդ խորհուրդը զարհուրեցրեց ինձ։ Հրամայուած է հարիւր հարուած տալ նրան, ով առաջին անգամ յայտնեց ինձ չէչէնների մոտդրութիւնը, ուայդ առաջինը, աւա՜ղ, իմ մայրն է»։

Համիլի մայրը լսելով այս՝ մի ճիչ արձակեց, բայց իմամը իբրև Ալլահի ու Մարգարէի ճշմարիտ կամակատար՝ բոլորովին չը տատանուեց։ Նրա հրամանով միւրիդները ցած դցեցին խանումի չադրը, բռնեցին ամուր նրա ձեռքերից ու խոնարհ որդին դարձաւ իր մօր դահիճը։ Բայց հինգերորդ հարուածի վրա թշուառ մայրն ուշաթափուեց. մահուան դողնութիւնը պատեց նրան ու նրա գլուխը ձորձի նման ընկաւ կրծքի վրա։ Զարհուրեց Համիլը, ցած թողեց իր պատժող ձեռքն ու ինքն ընկաւ մօր ոտքերի մոտ։

Խորին լռութիւնը, որ մինչև այժմ տիրում էր, ընդհատուեց. լսուեցան ամէն կողմից հեծկլըտանք ու լաց...

Բայց ահա Համիլը կրկին ոտքի է կանգնում. նրա աչքերը փոխանակ յուսահատութիւնի՝ փայլում են կարծես յաղթանակով։ Նա կանգնեց, բարձրացրեց կրակոտ աչքերը դէպի երկինք ու ասաց հրճուանքով. «Լալլահէ իլ-լալլահ, Մուհամմէդ ըէսուլ Ալլահ։ Երկնքի բնակիչներ, լսեցէք իմ խնդիրը, թոյլ տուէք ինձ ընդունել այն ճնցած հարուածները, որ պիտի ստանար մայրս. այդ հարուածներն ես կ՚ընդունեմ ուրախութիւնով, իբրև մի թանկագին տուրք ձեր զթութիւնի»...

Ու նա ժպտալով՝ ցած դցեց իր կարմիր ջուխան, հանեց արխալուխը, տուեց միւրիդներից երկուսի ձեռքը հասա ճիպոտներ ու հրամայեց, որ տան իրան ինն-ըսուն ու հինգ հարուած, աւելացնելով, որ եթէ նրանցից մէկը կը համարձակուի խնայել նրան ու թոյլ կը խփէ, նա իսկոյն տեղից վեր կը կենայ ու իր ձեռքով խենջալը նրա փորը կը խրէ։

Միւրիդներն արժանաւոր կերպով կատարեցին իմամի հրամանն ու 95 արնաթաթախ սպիներ դրոշմեցին նրա մէջքի վրա, բայց նա ցաւելու նշոյլ անգամ ցոյց չը տուեց։

Վերջացաւ ծեծը։ Վերկացաւ Համիլը, հագաւ շորերն ու արագ-արագ իջնելով կտրից՝

1002
5487

կանգնեց ժողովրդի առաջ, որն ապշած՝ նայում էր նրան, բայց նա բոլորովին հանդարտ՝ հարցրեց.

— Ո՞ւր են այն չարագործները, որոնց համար իմ սիրելի մայրս այսպիսի մի պատիժ ստացաւ, ո՞ւր են չէչէնների պատգամաւորները:

— Այստեղ են, այստեղ, գոռացին մի քանիսն ու չորս չէչէններին քաշքշելով՝ բերին Շամիլի առաջ: Ամէնքը գիտէին, որ խայտառակ մահը սպասում էր նրանց: Մի քանի միւրիդներ մինչև անգամ սրերը մերկացրին, որ իմամի առաջին հրամանի հետ թռցնեն ոճրերի գլխները: Չէչէնները գլխները գետնին սեղմելով հանդարտ կարդում էին թաղման վերջին աղօթքները, բայց Շամիլը բարձրացրեց նրանց իր ձեռքով ու ասաց հանդիսաւոր ձայնով.

— Գնացէ՛ք դէպի ձեր ժողովուրդն ու պատասխանի տեղ պատմեցէք նրան այն, ինչոր [illegible]......

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI–1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Имени Мясникяна

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 января 1890 года.

Типографія Ивана Н. Скороходова (Надеждинская, № 39).

ԳԻՆԸ ԵՐԿՈՒ ԿՕՊԵԿ Է։

198

2013